

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՅԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարւումը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարադաշտացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маяк».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաւանդիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ վերին-Ազու-
լիսից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ:—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ: Հանդիպում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻՑ

Մայիսի 28-ին

Սարսափելի հեղեղի տպաւորութիւնները համա-
րեա անսիրտի շարունակվում են: Ամէն կողմ,
ամենքի սրտի մէջ տիրապետում է կոկիծ, ցաւ,
երկիւղ և ա՛հ: Մի փոքրիկ փափուկութիւն երկնա-
կամարի վրա, մի թեթև որոտում, մի մեղմ անձ-
րեւ թաւական է արդէն, որ կանաչ և երեխայք
փախչեն դէպի բարձր և հեռու տեղեր: Թույլա-
սիրտների աչքերից երբեք չէ հեռանում 21-ի
հեղեղը իր բոլոր զարհուրանքներով: Սարսափը
միացած ամբողջ խորին տղիտութեան և խայտա-
ռակ նախապաշարմունքների հետ՝ հանդստութիւն
չէ տալիս ժողովրդեան: Պառանքներ իրանց ճիւղ-
ալիք երազներով և յիմար երազագրերով ամէն
որ տարածում են Ազուլիսում՝ նորանոր սարսափ-
ների լուրեր: Նրանք յայտնում են, որ Աստուած
զայրացել է աղուկների վրա, և դեռ պէտք է
շարունակէ պատժել ժողովրդեան երկրաշարժե-
րով, աւելի կատաղի հեղեղներով և մինչև անգամ
չսե կարկուտով: Նախախնամութիւնը բարկացել
է նրանց կարծիքով, որովհետև մարդիկ այլ ևս
չորեքշաբթի և ուրբաթ օրերը պատ չեն պահում,
ամէն օր եկեղեցի չեն գնում, որ — ցգիւնները հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

(Մի պատկեր բարձրագոյն կրթութիւն ստացած
երիտասարդների կենսութիւնը)

ԳՐՈՐԾ Վ. ԳԱՐՇԻՆԻ

Լուսնի արծաթափայլ, դողդոջուն շողերը սը-
փուկում էին տառաւոր մղձօնների վրա. մնացեալ
ծովը պատած էր մուշկ մութով: Ալիքները ուժ-
գին խփվելով աւազոտ ափերին հանում էին
խուռ աղմուկ, որ տարածվելով մթնոլորտի մէջ
հանում էր բարձրում կանգնած մարդու ական-
ջին: Նախաճանգնում տատանվում էին ծովից
աւելի մեղայն նաւերի ստուերները:—Մի ահալին
շողնեալ (որ վաւերից Պետրովիչը կարծիքով ան-
պատճառ պէտք է անդլիտիան) լինէր) կանգնած
էր լուսով լուսաւորված տարածութեան մէջ և
աղմուկում էր իր շողերով, որոնք ամսիկ նման
դուրս էին ժայթքում և ցրվում օդի մէջ: Վաւեր-
ից Պետրովիչը, որ իր կենսութեան դեռ այդպէս
բան չէր տեսել, յալիչալիված նայում էր ծովի,
լուսնի շողերի, շողնաւերի, նաւերի վրա, և ու-
րախութեամբ ներս էր չնչում ծովային օդը:—
Նա երկար գտարճանում էր այդ նոր ապաւո-
րութիւններով, երեսը դարձրած դէպի քաղաքը,
ուր նա դեռ այսօր էր ժամանել և ուր պէտք է
մնար շատ ու շատ տարիներ:—Նրա կտուր, քաղա-
քային ապուր մէջ դրանում էր խառն հասարա-
կութիւնը, որի միջից լսել էին լինում և ուսու-
րէն և օտար բարբառներ: Տեղային պատուար
անձինքները խօսակցում էին հանդարտ և անխու-
կերպով: Օրիորդները մեղմ բրբջում էին, իսկ նը-
րանց ետևից ընկած չափահաս զինուորականների
խուռները արձակում էին բարձր և ուրախ ձայ-
ներ:—Այդ խառնակների մէջ լսելու թիւով վրա
վաւերից Պետրովիչը դուրս գնալ դարձրեց, ու-
րախ խմբակը անցնում էր նրա մօտից, պատանիս-
րից մէկը խօսում էր դեռահաս զինուորականնե-
րից մէկի հետ. ընկերները աղաղակում և ընդհա-

մարձակվում են խօսել մարդոց հետ, որ փոքրերը
մեծերի ձեռքը չեն համարում... և այլն և այլն,
և աւելի ցաւալին այն է, որ այդ խայտառակ
վիճակին ենթարկվում են և համեմատաբար
բարձր աստիճանի վրա կանգնածները...:

Ո՛ւմ յայտնի չէ, թէ այդ արմատացած նախա-
պաշարմունքները ինչ զաղբալի երկայնքների պատ-
ճառ են դառնում մի քանի ընտանեկան կեանքի մէջ,
որտեղից դրանց ազդեցութիւնը տարա-
ծում են մինչև հասարակական և ուսումնարանա-
կան կեանքի շրջանները: Որքան ողորմելի դրութեան
մէջ է հայ կիւնը: Ապա ուրեմն, ինչ շօշափելի
արդիւնք տուեց այստեղի տաճն և եօթ տարի գո-
յութիւն ունեցող օրիորդաց ուսումնարանը, որ
կլանել է շատ տաճնեակ հազարներ ժողովրդեան
զրպանիք...: Եւ դեռ գտնվում են մարդիկ, ու-
րոնք իրանց դէմքը կնճռում են, երբ ուսումնա-
րանի միջից ուղում են փաշել ընտանեկան կեան-
քի այդ վատ կողմերը... Բայց թողնենք առ այժմ
այդ և այդ օրինակ հարցերը: Հասարակական
միտքը զբաղուած է լուրի հեղեղի հետևանք-
ներով: Գիւնդների փնտռելը դեռ շարունակվում
է: Անցեալ օրերին, երբ պ. զաւառապետը այո-
տեղ էր իր օգնականներով և մօտ 20 եասաու-
ներով և կազակներով, հրակրեց հասարակու-
թեանը և յայտնեց, որ պէտք է ամենից առաջ
ջանք գործ դնել գտնելու բոլոր դիակները: Պ.
զաւառապետը իր միտքը յայտնեց մի երկար նա-
խաբանով, որով, ինչպէս հասկացայ վերջում, ու-
ղում էր համոզել, թէ դիակների գտնելը ամենա-
հաւան գործ է, ըստ որում նրանց գտնելի տակ
մնալուց և փնտրուց՝ կարող է առաջ գալ մի որ
և ից վտանգաւոր տարափոխիկ հիւանդութիւն:
Խնդիրը ինքն ասւ էր...

տում էին նրա վերմ, ըստ երևոյթին պաշտպանո-
ղական ճառը:

—Չը հաւատաք, Նինա Պետրովիչա, սուտ է ա-
սում, բոլորը իրանից է հարուստ:

—Հաւատացե՛ք, Նինա Պետրովիչա, ես ամենևին
մեղաւոր չեմ:

—Եթէ դուք, Շէփրէօվ, մէկ էլ կը համարձակ-
վէք ինձ խաբել... ասում էր դեռահաս օրիորդը
կեղծ անխուսժութեամբ: Բայց վաւերից Պետրովիչը
չը կարողացաւ մինչև վերջը լսել, որովհետև խուսմը
նրա կողքից անցաւ և ընկաւ առաջ: Կէս րօպէից
յետոյ միջութեան միջից նորից լսվեցան ծիծաղի
աղաղակներ:

—Ահա նա, ահա իմ ապագայ արտը, որի վրա
ես պէտք է աշխատեմ, ինչպէս մի համեստ սերո-
նացան, մտածեց վաւերից Պետրովիչը, նախ
որովհետև նա նշանակված էր տեղային զինու-
որդի վարժապետ և երկրորդ, որ նա սիրում էր,
մինչև անգամ լուռ մտածելու ժամանակ իր մըտ-
քերը ձևակերպել. օրինակներով:—Այ՛, հարկաւոր
է աշխատել այդ համեստ ապագայի վրա, մտա-
ծում էր նա, նորից նստելով նստարանի վրա ե-
րեսը դէպի ծովը:—Ո՛ր են իմ երազներս ուսու-
չապետութեան, հրապարակաբօսութեան, մեծ ա-
նուան ու համբաւի մասին: Այնքան ոյժ չունե-
ցար, խեղճ վաւերից Պետրովիչ, որ այդ բոլոր ե-
րազները կարողանայի իրագործել. փորձիք դոնէ
այդ ապագայի գործելու:

Եւ քաղցր ու գեղեցիկ մտքերը սկսեցին շար-
ժուել զինուորական նոր ուսուցչի զլխի մէջ:—
Նա մտածում էր թէ ինչպէս առաջին դասարան-
ներից ինքը կը հասկանայ շատուածային կայծը՝
մանուկների մէջ, ինչպէս կը խնամէ այն բնաւո-
րութիւնները, զորոնք ձգտում են ձգել իրենցից
խաւարի լուծը, ինչպէս նրա հսկողութեան տակ
կրկնապէս թաղել, ինչպէս նրա հսկողութեան տակ
նոթի, երկտասարդ ոյժերը և վերջապէս ինչպէս
նրա աշակերտների միջից ժամանակով կարող են
դուրս գալ նշանաւոր մարդիկ... Նրա երեւակա-
յութեան մէջ արդէն նկարվում էին մինչև անգամ
այդպիսի պատկերներ. ինքը, վաւերից Պետրովիչը,
ծերացած և սպիտակած ուսուցիչը, նստած է իր

դուխները գիտեն արդէն թէ յիշուի ինչպիսի
վտանգի առաջ է կանգնած զիւրը, եթէ այս շո-
քերի ժամանակ, հողի տակ մնացած բազմաթիւ
փչացած մարմիններից՝ մի որ և է էպիդեմիա յա-
ռաջ գայ: Սակայն տղիտութեան ամենացաւալի
յատկանիշներից մէկն էլ հէնց այն է, որ երբեք
ապագայի վտանգների մասին մտածել չը կայ:

Մեր գիւղերում միշտ տեղի են ունենում ամե-
նայն տեսակ հակա-առողջապահական և հակա-
տնտեսական երևոյթներ, որոնց վրա շատ թեթև
է նայում ժողովուրդը և արդէն չբանը բանից
անցած ժամանակին է խնդրի գալիս, և այն ժա-
մանակն էլ բաւականանում է եկեղեցում մօմ վա-
ռելով և այլ այդպիսի բաներով...:

«Ուղում ես խաղաղ լինել, պատրաստ եղի՛ր պա-
տերազմի» ասում է լատինական խելօք առածը:
Պ. զաւառապետը գնաց, և այստեղ թողեց իր
օգնականներից մէկին, որ սա հսկէ առաջ տանե-
լու բոլոր կարևոր աշխատանքները: Հսկելը ինքն
ըստ ինքեան հարկաւոր է, բայց հէնց այժմ հար-
կաւոր են նիւթական, դրամական միջոցներ գործը
առաջ տանելու համար: Սակայն, այդ մասին ոչ
որ չէ մտածում: Ումանք յոյս ունեն, որ կառա-
վարութեան կողմից օգնութիւն կը լինի: Ամենքը
իրանց միակ յոյսը դրել են արտաքին օգնութիւն-
ների վրա: Յոյս ունեն որ ուրիշ տեղերի հասա-
րակութիւնները անտարբեր չեն մնայ: Ազու-
լիսի թշուառութեան լուրը անկասկած շատ տեղ
հասած կը լինի: Սպասում ենք որ զգացմունքի
տեղ մարդիկ չեն խնայի իրանց բարեխօսութիւն-
ները և լուսման: Պէտք է յուսալ, որ ժողովուրդը
չի սխալվի իր սպասելիքների մէջ, վերաբերու-
թեամբ այն դրամական նպաստների, որ պիտի
լինիր ինքն ասւ էր...

տանը, իր համեստ ընտանեկանի մէջ. նրա նախկին
աշակերտները եկել են նրան տեսութիւն. նրան-
ցից մէկը ուսուցչապետ է այս ինչ համալսարանի,
յայտնի «մեզ մօտ և Եւրօպայում», միւսը—գրող,
երևելի վիպասան է, երրորդը—նոյնպէս նշանաւոր
հասարակական գործիչ է: Սրանք ամենքը վարվում
են նրա հետ ամենամեծ յարգանքով: «Այդ ձեռ
բարի սեյմերի շնորհին է, որոնք մանկութեանս
օրերում ընկան հոգուս մէջ, որ ես այսօր մարդ
եմ դարձել, յարգելի վաւերից Պետրովիչ, ասում
է հասարակական գործիչը և երախտագիտական
զգացմամբ սքըմում է իր նախկին ուսուցչի ձեռ-
քը...»

Բայց վաւերից Պետրովիչը շատ երկար չըդ-
բայվեց այդ բարձր ինչպիսիքներով. նրա միտքը
չուտով դարձաւ այնպիսի առաքիանների վրա, ո-
րոնք անմիջապէս վերաբերվում էին նրա ներկայ
գրութեան: Նա հանեց զրպանիք իր նոր քաակը,
համարեց՝ նրա միջի փոքրեր և սկսեց մտածել
թէ բոլոր հարկաւոր ծախքերից յետոյ դեռ էլի
ինչքան կը մնայ նրա մօտ: «Վիպասն որ այնքան
դուր ծախք արի ճանապարհին, մտածեց նա:—
Քնտիրարան... ենթադրենք ամսական քսան մա-
նիթ, մանուշակ, դեղաւոր, թէյը, ծխախոտ... վեր-
ջապէս, ամենայն դէպքում, կէս տարւում կարող
եմ հազար մանիթ յետ գցել: Այստեղ անտարա-
կոյս կարելի կը լինի նաև լաւ մասնաւոր դասեր
գտնել. դասը այդպէս չորս կամ հինգ մանիթա-
նոց...» Բաւականութեան զգացմունքը յալիչ-
տակեց նրան. նա ձեռքը տարաւ զրպանը, ուր
պահված էին երկու անձնաթղթական նամակներ տե-
ղային նշանաւոր անձինքների հասցեով, որը նա
քան անգամ կարդացել էր: Նա հանեց այդ նա-
մակները, զգուշութեամբ յետ արեց փաթեթած
թուղթը, բայց հասցեները չը կարողացաւ մէկ էլ
կարդալ, որովհետև լուսնի լոյսը այնքան գործը
չէր, որ վաւերից Պետրովիչը կարողանար այդ
հաճութիւնը ստանալ:—Նամակների հետ միասին
փաթեթած էր և մի լուսանկար: Վաւերից Պետրո-
վիչը դարձրեց նրան ուղղակի լուսնին և աշխա-
տում էր նշանակել իրեն յայտնի կերպարանքը:
«Ո՛հ, իմ լիզա» արտասանեց նա համարեա բար-

անցեալ նամակում գրեցի հանգամանօրէն: Գա-
ւառապետի կարգադրութեան համաձայն, մանրա-
մասն ցուցակներ կազմվեցան բոլոր վնասների
համար, որ պիտի ներկայացվի Նրանի նախա-
գապետին: Վասնորի վերաբերութեամբ հանում եմ
այդ թղթերից քանի մի տեղեկութիւններ: Այս
տեղեկութիւնները արդէն պաշտօնական բնաւո-
րութիւն ունեն: Փչացել են 63 տներ, վնասն է
160,500 ռուբլի: Փչացել են 192 այգիներ, վնասը՝
144,200 ռուբլի: Տներ թէյ փչացել է կաշը,
77,450 ռուբլու արժողութեան: Կոտորված է
1035 ռուբլու արժողութեան տաւար: Կան և այն-
պիսի վնասներ, որոնք արդէն վերաբերում են
ամբողջ հասարակութեան: Փչացած ջրանցքների
թիւն է 29, վնասը՝ 17,000 ռ. ցամաքել է 15
աղբիւր, վնասը՝ 24,350 ռ: Գիւղի կամուրջը՝ բո-
լորովին անհետացել է, վնասը՝ 2000 ռ: Վնա-
սուած են՝ ուսումնարանապատկան շինութիւն և
երկու եկեղեցի՝ իրանց զարդարանքներով՝ վնասը
է 11,100 ռուբլի: Գոմարից երեւում է, որ իմ ա-
ռաջի նամակում յայտնածից մեծ զանազանութիւն
չունի: Բայց հաստատապէս կարելի է ասել, որ
վնասը աւելի է և այն գոմարից, որ ես նշանա-
կել էի առաջին նամակում, այսինքն այդ վնասը
minimum կը լինի 1/2 միլիոն, եթէ այնտեղ հա-
շուենք և այն վնասները, որոնք իրեն հետևանք
հեղեղի՝ անխուսժափելի են: Որքանի համար այ-
դիների նշանաւոր մասը չորանալու վտանգի մէջ
է. շերամապահութիւնը մեծ վնաս պիտի պատճա-
ռէ. քանի որ թիթիւն տերև չը լինելու պատ-
ճառով շատերը որբը ծախում են, շատերն էլ
մինչև անգամ դէն են ածում: Ամենաառատ միջոց-
ները թնայացել են: Պէտք է գիտենալ, որ այս-

ձրը ձայնով և քաղցր յուզմամբ: Լիզան նրա հարս-
նացուն էր, որը մնացել էր Պետերբուրգում և
սպասում էր, մինչև որ վաւերից Պետրովիչը յետ
ձգէ հազար ռուբլի, որ երկուստապէս ամօնները
անհրաժեշտ էին համարում սկզբնական սպրբու-
կարգի համար:

Հաւաքանքով նա լուսանկարը և նամակները
յետ գրեց ձախ կողքի զրպանի մէջ և սկսեց ե-
րազել ապագայ ընտանեկան կեանքի մասին: Եւ
այդ մտածողութիւնները նրան աւելի էլ քաղցր
էին թուում, քան թէ առաջինները հասարակական
գործիչի մասին, որը կը գայ չորսակալ լինելու
նրանից իր սրտի մէջ ցանած բարի սերմերի հա-
մար:

Հեռու ցածում ծովը աղաղակներ էր հանում,
քամին կամաց կամաց ցրտանում էր: Անգլիա-
կան շողնաւոր դուրս էր եկել լուսնի շողերից, ո-
րոնք բեկեղեկվելով հազարներանգ պայծառ զոյնե-
րի, սփռվում էին ծովային անհուն տարածութեան
վրա և աւելի ու աւելի լուսաւորում երկիրը: Վա-
ւերից Պետրովիչը սիրտը չէր կարողանում պոկ
դալ այդ սքանչելի տեսարանից. նա չէր կամե-
նում նստած տեղից վեր կենալ և գնալ փակվել
իջևանած հիւրանոցի՝ նեղ սենեակի մէջ:

Մի պարոն մտաբանեայ թեթև զգեստով, զլխին
յարդեայ փեղոյը՝ փաթեթած մեղաւառայ թաշկի-
նակով (տեղական պճնաւորների ամուսնայ զգես-
տը) բարձրացաւ նստարանի վրայից, որի մօտով
անցնում էր վաւերից Պետրովիչը և անցաւ.

—Թոյլ տուէ՛ք ծխեմ:

—Հրամայե՛ք, պատասխանեց վաւերից Պետրո-
վիչը: Այլովից ծխախոտի կարմիր փայլը լուսա-

ւորեց նրան ծանօթ դէպքը:

—Նիւրնայ, իմ բարեկամս, միթէ՛ դու ես այդ:

—Վաւերից Պետրովիչ, բացականցեց պարոնը:

—Ես ինքն եմ... Ո՛հ, ինչքան ուրախ եմ
Մտքովս անգամ չէր կարող անցնենալ, ասեց
վաւերից Պետրովիչը և գրկախառնելով իր բարե-
կամին երեք անգամ համբուրեց նրա հետ:

Բայց այդ ինչպէս:

—Շատ հասարակ կերպով. ես այստեղ եմ ծա-
ռայում. իսկ դեռ որտեղից:

բում են իրանց այգիների բերքովը։ Նրանք այժմ մնացել են առանց յոյսի։ Այգիպիսիների դուռնիքը արդէն անտանելի է։ և դրանց կեանքը անտանելի կը լինի։ առանց կողմնակի օգնութեան։ Աւելացրէ՛ք դրա վրա և այն, որ կարկուտը փչացրել է ցորենի արտերը։—Պարզ խնդիր է, որ արեւմտեական այս ճգնաժամը կարգի հասարակական կեանքի բոլոր կողմերի վրա։ Այդ, բացի այն որ մարդկային կեանքի ճշմարտութիւններէն մէկն է, այլ և դա միւս կապ ունի հայի բնաւորութեան հետ, որը միշտ իր անձնական շահերովն է չափում հասարակական գործերին։ Եւստիստիկ չափը։ Փոստի խնդիրը դեռ երկար առկա կը մնայ, թէ և փոստի իշխան բանալու իրաւունքը արդէն տրուած է և կարեւոր իրեղծներին մի մասն էլ արդէն բերուած է։ Բժշկի կարեւոր խնդիրն էլ երկար ժամանակ առկա կը մնայ, գուցէ և բուրդովն դատաւարութիւն մուսաւորութեան։ Միմեանց յետեւից օրինակներ բերելը աւելորդ կը լինի, ըստ որում ան ձն աւական ձգտումները մեր ժողովրդեան մէջ խոր արմատներ են գցել։ Տնտեսական այս ճգնաժամը կարգի, ի հարկէ, ի միջի այլոց, և ուսումնարանի վրա, մանաւանդ որ Ազգայնաց ուսումնարանը իր ներկայ դրութեամբ շատ մեծ կախում ունի ժողովրդեան կապիւններէն։ Հոգաբարձութեան մի մասը այս տարի ևս անսկզբ ճիւղաւորական փոփոխի հաւաքելու գործը սկսեց։ տարաբաղաւոր այդ գործը այժմ կիսատ կը մնայ։ Ցանկութիւն կար բացանելու և օրիորդաց երբորդ դատաստան։ Ցաւ է ասել, այդ էլ կը մնայ լոկ ցանկութիւն։ Սակայն թողնենք այդ։ Ներկայ դրութեան ազդեցութեան տակ, ես կը հաղորդեմ հեղեղի հետեւանքների մասին, որը, սակայն, շատ մարդներ չի մտաւորի, և որի տարաբաղաւոր մարդ տարբեր կարծիքներ կը վարենք։ իր չար երեխային։

Այլ անգամ կը խօսեմ այն մասին, թէ ինչպէս պէտք է բացատրել այս պարբերական քաղաքականութեան ունեցող հեղեղի պատճառները, և թէ ինչ միջոցների պիտի դիմէ ժողովուրդը, ազատ լինելու համար նրա աստիճան հարուածներից։ Ժամանակաւ ներածին պէս, կը շարունակեմ տեղեկութիւններ տալ, մանաւանդ որ վերջումը առանձին կը գրեմ «Մշակին» մեր ժողովրդեան անտեսական կեանքի մասին մի կողմերի մասին։ Ի վերջոյ, կը խօսեմ իմ խնդրի մասին։

— Ես էլ այստեղի զինադիւայի ուսուցիչ եմ նշանակուած։ Գալստ հենց այս է։

— Ո՛րք ես փայլ իջել։ Եթէ հիւրանոցում, խնդրեմ ուրեմն գնանք իմ մօտ։ Շատ ուրախ եմ որ քեզ տեսնում եմ։ Գուր. այստեղ կարծեմ ծանօթներ չունես։ Գնանք ինձ մօտ, կընթերցենք, կը խօսենք, հին օրերը կը յիշենք։

— Գնանք, գնանք, համաձայնեց Վասիլի Պետրովիչը։— Ես չափազանց ուրախ եմ։— Մշակութեան ինչ միջոցները անապատ էր թվում և անապոյտի ցանկալի հանդիպումն։ Կառապան, գուցէ նա։

— Հարկաւոր չէ, մի կանչիր։ Սերգէյ, մօտ քշիր, գուցէ Վասիլի Պետրովիչի բարեկամը բարձր և հանդարտ ձայնով։ Երեւ կարծեմ իսկոյն մօտեցաւ մայրին (տրոպա), տեղը թռաւ նրա մէջ։ Իսկ Վասիլի Պետրովիչը թայտի վրա կանգնած տարակուսանքով նայում էր կառքին, և երկարահորին և հաստապահներ։

- Կուրբեռաչէ՛վ, այդ ձիաները քննդ են։
- Այո՛, այո՛։ Ի՛նչ է. չէ՛ր սպասում։
- Չարմանալի է... միթէ՛ այդ դու ես։
- Ի հարկէ ես եմ, էլ ուրիշ ով կարող է լինել։ Գէ՛հ, նստիր, դեռ շատ կը խօսենք։

— Վասիլի Պետրովիչը նստեց կառքի մէջ Կուրբեռաչէ՛վի կողքին և կառքը սլացաւ, ազդեցիկ և ցատկոտելով սալաքայտակի վրա։ Վասիլի Պետրովիչը նստել էր փափուկ բարձրի վրա և տառաւելովով ժպտում էր։ «Այդ ինչ հանելուկ է, մտածում էր նա։ Վաղուց է որ Կուրբեռաչէ՛վը մի ամենաաղքատ ուսանող էր, իսկ այժմ—իր սեփական կառքն ունի։ Իսկ Կուրբեռաչէ՛վը ոտքերը առջևի նստարանի վրա մեկնած, լուռ, զննակ (свиря) էր ծխում։ Հինգ րոպէից յետոյ կառքը կանգ առաւ։

— Գէ՛հ, բարեկամս, իջիր։ Ես քեզ ցոյց կը տամ իմ համեստ խրճիթը, ասաց Կուրբեռաչէ՛վը կառքից վայր իջնելով և օգնելով Վասիլի Պետրովիչին, որ վայր դադ։

«Համեստ խրճիթը» մտնելուց առաջ հիւրը մի աչքի տակով անցկացրեց նրան։— Լուսինը դեռ տան ետևումն լինելով չէր լուսաւորում նրան,

տակի խօսելու և այդ հիմնարկութեան մասին։ Մի տարուայ մէջ ծանօթանալով ժողովրդեան դրութեան և ուսումնարանի պայմանների հետ, ես «Մշակի» մէջ կը պարզեմ այն խնդիրները, թէ ինչպէս ուսումնարանը ներթափանցաւ կառքի կը լինի քիչ անկախ դարձնել։ Ես մի յօդուածով ցոյց կը տամ, որ այժմեան հոգաբարձութեան հակացող մասը իրան չը պէտք է կաշկանդուած համարէ երբորդ դատաստան չունենալով, այլ որ կարելի է երկրորդ դաստիարակութեան անկախ անել, ունենալով լուռ ուսուցչական խումբ, քան երրորդ դաստիարակութեան նախնական ուսուցիչներ։ Ուսուցիչը ուսումնարանի հոգին է։ Ուսուցչից է կախուած ուսումնարանի ներքին արժէքը։ Եւ դրա մէջ կը համոզեցնեմ ազդեցիկներից շատերին շուտով «Մշակի» միջոցաւ։

Խ. Մարտիկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱՌԻՆ

Թիֆլիս, յունիսի 10-ին

Երկար յուրեմից յետոյ ստիպուած եմ երկու խօսք ասել, Հաւաքարի Հռիփսիմեան օր. ուսումնարանի մասին, պ. Գ. Ազգայնացիին, իբրև թեմական վերահսկող, որովհետև լուրջութեան էլ մի անտանելի հիւանդութիւն է, մանաւանդ հասարակական գործերում։

Թէ պ. Ազգայնացի օրով Հռիփսիմեան ուսումնարանը ինչ օրն ընկաւ, մինչև անգամ ուսումնական մասը, կամ թէ պ. Ազգայնացի ինչ դեր խաղաց Հռիփսիմեան ուսումնարանի յառաջդիմութեան համար, այս մասին ես այժմ լուռ եմ, և թողնելով բոլոր մանրամասնութիւնները իր ժամանակին, որ գուցէ շուտով հրապարակօրէն կը ներկայացնեմ ուսումնարանի բոլոր մանրամասնութիւնները հասարակութեանը, այնուհետև մի անգամայն դատաստանը թողնելով հասարակութեան խղճին, որովհետև հասարակական գործերում, կարծեմ որ ոչ թէ պաշտօնական անձը, այլ մեզանից ամեն մի անհատ, իբրև հասարակութեան անդամ, ունի իրաւունք ազատ արտայայտել իր անկեղծ կարծիքները, իր զգացմունքները այն պաշտօնական անձի դէմ՝ որ իր ստանձնած պաշտօնը ճշմարտութեամբ և արդարութեամբ չէ լուրջացնում։

Ուստի և նա այդքանը միայն կարողացաւ նկատել, որ «խրճիթը» միայնակ էր, քարեայ և տասը կամ տասն երկու պատուհաններով և հայկաւոր ապակիներով զարդարուած, ծանր կաղնեայ դրան զվարէ, քանակազոր և տեղ տեղ ոսկեզօծած սիւնակների վրա բարձրանում էր քիւր (30НТБ)։ Բրօնզեայ զանգակալ թռչունի մազիկների պէս ոլորուած բռնած էր բազմանկիւնի բլրեղը, իսկ փայլուն պղնձեայ տախտակի վրա փորագրուած էր տառերովը ազգանունը։

— Լաւ խրճիթ է, ասաց Վասիլի Պետրովիչը մտնելով նախասենեակը, որ զարդարուած էր կաղնեայ կարասիով և սև փառաւոր վառարանով։ Սա խրճիթ չէ, այլ, այդպէս ասած, մի պալատացի է։ Միթէ՛ այդ քո սեփականն է։

— Ո՛չ, եղբայր, դեռ այդ տեղին չեմ հասել։ Վարձով եմ բռնում, տարեկան 1500 ռուբլի թանգ չէ։

— Հազար հինգ հարիւր ռուբլի, բացականչեց Վասիլի Պետրովիչը։

— Այո՛, ասելի չա՛հաւէ և 1500 ռուբլի վճարել, քան թէ ձեռք տալ դրամազլին, որը եթէ անշարժ կապ չէ, կարող է շատ ասելի տոկոս տալ։ Բացի սրանից սեփական տուն ունենալու համար շատ փող է և հարկաւոր, որովհետև մարդ եթէ տուն է չինում, այդպէս անապատանք չը լինի։

— Անախտան, դարմանալով բացականչեց Վասիլի Պետրովիչը։

— Ի հարկէ, մի նշանաւոր տուն չէ։ Բայց շուտ անհեղ քան... վրա բերեց տանտէրը։

Վասիլի Պետրովիչը վերաբերուն հանած, գնում էր տանտէրով ետեւից։ Կուրբեռաչէ՛վի բնակարանի կահկարասիքը ասելի և ասելի ապշեցնում էր նրան։ Բազմաթիւ բարձր սենեակները տախտակամած յատակներով ծածկուած էին թանգազին ոսկեկար պատուածներով (обой)։ Սեղանատունը նոյնպէս կահաւորած էր կաղնեայ կարամբով և զարդարուած կրկնների (жест) նկարաքանդակներով, անապատանք դակազոր դարձնելով մեծ բոլորակ սեղանով։ Առաստաղից կախուած բրնձեայ կանթեղը կաթնազոյն լուսամտիկով լոյսի մի ամբողջ հեղեղ

խնդրում եմ պ. Ազգայնացից, որ իր ուշադրութիւնը դարձնի հետեւեալ ամենակարեւոր կէտերի վրա։

1) Ուսումնարանի գանձապահ պ. Ս. Եղիշաբեկեանի մօտ մնում է անցեալ 83 թիւից 392 ռ. 65 կ. կանխիկ ուսումնարանապատկան փող, և վերոյիշեալ թիւից սկսած մինչև դեկ. 1-ը զանազան պահը ստացել է շատ փողեր, օր. ներկայացուած, նուէրներից և թողարկներից, և նմանապէս արել է ծախսեր, իսկ դեկ. 1-ից ուսումնարանից հեռացել է առանց հաշիւ տալու, այնպէս որ մինչև օրս յայտնի չէ թէ պ. գանձապահի մօտ հրքան փող կայ։ 2) Գեկ. 15-ից (83 թ.) Գ. Թարխ. ինքնազուրկ, առանց արձանագրութիւն կազմելու, դարձել է գանձապահ և ումից ինչ ցանկացել է, համաձայն իր կամքի, այնքան էլ ստացել է թողարկներից, քայք դժբաղդաբար ուսումնական տարին վերջացաւ, աշակերտահիններին էլ արձակեցին, իսկ ուսումնարանի հաշիւը մինչև օրս յայտնի չէ (այստեղ ի հարկէ դեռ չեմ յիշում հասարակութեանը)։ 3) Եթէ Հռիփսիմեան ուսումնարանը փակվելու է, կամ միացվելու է Մարիամեան ուսումնարանի հետ, կարծեմ որ ասելի լաւ կը լինի նախ և առաջ հրաւիրել հաւաքարացից, մանաւորապէս նրանց՝ որոնք ուսումնարանի բարեբար են յիշուած և նվթապէս օգնել են, այնուհետև երկու տարվայ հաշիւը տալ նրանց որպէս զի իմանան, որ իրանց տուած կողմէնները ինչի վրա են ծախսուել, իսկ յետոյ ամեն բան խորհրդով անել։ Այս ամենից յետոյ յուսով եմ, որ պ. Ազգայնացի իմ ասածները «ձայն» բարբառոյ յանապատի» չի թողնի, այլ կը բարեհաճի, իբրև թեմական վերահսկող, վերոյիշեալ երկու հոգաբարձուներից պաշտօնական կիրպով և օրինական ճանապարհով ամբողջ հաշիւը ստանալու, որպէս զի յայտնի լինի թէ ուսումնարանը պարտք ունի թէ փող, որովհետև տանտէրը համաձայն մեզ հետ դաշնագրած պայմանի զօրութեան գանդատվել է հաշարար դատարանում և վերջոյ է կատարողական թերթը ու պահանջում է իր տան վարձը։

Ն. Հ. Ա. Մէլիք-Այվազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

...տանն առում են, որ

էր սիւնում ու լուսաւորում այդ սեղանը։— Դասի՛նք կահաւորված էր դաշնադրով և բազմաթիւ բաստեռներով (диванъ), նստարաններով, աթոռներով և ուրիշ կարասիով, որոնք շինուած էին ուրուսի փեկներէս (букъ) փայտից։ Թանգազին վիմառիպ և փառ խաղաղիկ նկարները կախուած էին ոսկեզօծ շրջանակների մէջ։ Հիւրանոցը, ինչպէս սովորաբար ընդունված է, զարդարուած էր մետաքսեայ կահաւորութեամբ և մի կոյտ անպէտք, առարկաներով։ Մարդ կարող էր կարծել, որ տանտէրը մէկ անգամից հարստացել, երկու հարիւր հազար է տարել և շուտով այդպիսի արտադրութեամբ կահաւորել է իր բնակարանը։ Բոլորը մէկ անգամից էր առնուած, և առնուած էր ոչ թէ նրա համար, որ հարկաւոր էր, այլ որովհետև ասելորդ փող է հաւաքվել, որը, ինչպէս ասում են, գրպանը ծակելիս է եղել։ Այդ փողերով էր գնված դաշնամուրը, որի վրա, ինչքան յայտնի էր Վասիլի Պետրովիչին, Կուրբեռաչէ՛վը միայն մի մատով կարող էր խաղալ՝ հին անհայտ նկարը մէկը այն բերաւոր պատկերներից, որոնք վերագրում են Ֆլամանդիայի մի օր և է երկրորդական նկարչի և օրի վրա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, չինական շախմատները, որոնց նրբութեան և բարակութեան պատճառով, չէր կարելի խաղալ և որոնց ծայրերին գտնվում էին երեք երեք մատ իրար մէջ հագցրած գնդակներ. այդ փողերով էին առնուած և միւս բազմաթիւ անպէտք առարկաները։—

Բարեկամները մտան առանձնասենեակը, ուր ասելի յարմար էր։ Սենեակի մէջտեղում դրած էր գրեթե անապին սեղանը, որի վրա փռուած էին այլ և այլ բրօնզեայ և յաթնապակեայ մանր իրեր, թղթեր, զմաքրական և նկարչական առարկաներ։ Պատերից կախուած էին անապին ներկած յատակազօծեր և աշխարհադրական քարտէզներ. իսկ նրանց տակ դրած էին ցած տաճկական բաստեռներ մետաքսեայ ծածկոցներով։ Կուրբեռաչէ՛վը ձեռքը ձգելով Վասիլի Պետրովիչի մէջքին տառաւ ուղիղ գահաւորակի մօտ և նստեցրեց փափուկ բաստեռների վրա։

— Գէ՛հ, շատ ու շատ ուրախ եմ, որ հան-

ուսաց դեսպան պ. Նէլիով ներքին գործերի մինիստր կոմս Տօլստօյից մի հեռագիր ստացաւ, որով յանձնարարում է նրան, դեսպանին, իմանալ թէ ինչն է հարկադրում Ներսէսին հրաժարվել ամենայն հայոց կաթողիկոսի աստիճանից, և որ ուսաց դեսպանութեան առաջին խորհրդական պ. Մուս. Ներկայացաւ նորին բարձր սրբազնութեանը և խնդրում էր նրա տեսակցութիւնը Նէլիով դեսպանի հետ։ Տեսակցութիւնը տեղի ունեցաւ Բուխարէյէյում, Արախան-փաշայի ապարանքում։ Տեսակցութիւնը բաւական երկար տևեց։ Բանակցութիւնները դեռ ևս շարունակվում են։ Թղթակցի խօսքերով, Ներսէսը, կաթողիկոսական աստիճանը ընդունելուց յետոյ, դիտաւորութիւն ունի առաջին ժամանակում և. Պօլսում մընալ, հայոց եկեղեցու դրութեան վերաբերութեամբ մի քանի չը բացատրված խնդիրները պարզելու համար։

«НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագրի մէջ կարդում ենք, «վերջին ժամանակներս Վաղարշապատի միջով Արցիկովկաս են անցնում (գլխաւորապէս Կարսի նահանգը) զաղթականների նշանաւոր խումբեր Ռուսաստանից, որոնք իրանց համար նոր ապաստանարան են որոնում։ Երէկ, օրինակ, դրում են «Терек. Вѣд.» լրագրի վերջին համարում, քաղաքի փողոցներով անցնում էր զաղթականների համարեա մէկ ամբողջ գլուխ, —մօտ 30 ֆուրգօն, բեռնաւորված զանազան կահկարասիքով, կանանցով և երեխաներով։ Տեսուր տպաւորութիւն է գործում այդ թշուառ թափառականների խղճալի պատկերը, նրանց բոլորի դէմքերը մաշված են, հագուստը աղքատիկ. մի քանիսները մօտենում էին պատուհաններին և ողորմութիւն էին խնդրում։ Ո՛րք էք գնում, —հարցնում էին նրանց։— Վարս ենք գնում, սիրելիք, կարս։— Իսկ ձեզ համար հող կայ այնտեղ։— «Չը գիտենք, սիրելիք, ոչինչ չը գիտենք, տեսնենք Աստուած ինչ կը տայ։— Գնում են, ուրեմն, բազմի վրա յուսալով և լուրերին հաւատալով, և Աստուած գիտէ, թէ ինչ է սպասում այնտեղ այդ խեղճերին։

ԱՍԻԱՅԻՍՏԱՆԻՑ՝ մեզ գրում են, «Ամսոյս 6-ին Տ. փաշայեան—Տէր-Գրիգորեան և պ. Տէր-Գրիգորեանցը, տեղային սիրողների մասնակցութեամբ,

դիւրում եմ նախկին ընկերոջս, ասաց նա։— Ես ես... դիտես, ինձ այնպէս էր թւում թէ անապատի մէջ եմ ընկել և անա պղտիսի հանդիպումն։ Գիտես, Նիկողայ Կոնստանտինի, քեզ տեսնելու ինչքան շարժվում է հոգիս, ինչքան յիշատակներ են կենդանանում յիշողութեանս մէջ...

— Ի՛նչ յիշատակներ։

— Ի՛նչպէս թէ ինչ յիշատակներ։ Ուսանողական օրերի, այն ժամանակների յիշատակները, երբ եթէ ոչ նվթապէս, գոնէ բարոյապէս այնպէս լաւ էինք ապրում։ Յիշում ես...

— Բան չունես, արժէ միթէ մտաբերել շան մսից շինած երշիկները, որ ես ու դուս լափում էինք։ Թող այդ բաները, զուրկ են տարեկ... Իսկ կամենում ես, Begalia Imperialia, թէ չը գիտեմ ինչ, գիտեմ միայն, որ հաւր 50 կօպէկ է։ Վասիլի Պետրովիչը վերջոյց արկղիկի թանգազին զանակներից մէկը, հանեց զրպանից փղերիկի զանակ, կտրեց զանակի ծայրը, կպցրեց և ասաց.— Նիկողայ Կոնստանտինի, ինձ բոլորովին այնպէս է թւում, որ երազի մէջ եմ։ Մի քանի տարուայ մէջ այդպիսի լաւ տեղ։

— Ի՛նչ տեղ. տեղս մի կօպէկ չարժէ։

— Ինչպէս թէ մի կօպէկ չարժէ, հապա դու ինչքան ես ստանում։

— Ինչ. ու՞նի։

— Ի հարկէ ունի։

— Ես, նահանգական քարտուղար երկրաչափ Կուրբեռաչէ՛վ 2-րդս, ու՞նի ստանում եմ տարեկան հազար վեց հարիւր ռուբլի։

Վասիլի Պետրովիչի աչքերը չւղեցան։

— Ինչպէս, հապա այդ ամենը որտեղից է։

— Է՛հ, եղբայր, դու շատ միամիտ ես։ Ինչպէս թէ որտեղից, ջրից և հողից, ծովից ու ցամաքից. իսկ զլուսաւորապէս անա այստեղից։

Եւ այս ասելով նա ցուցամատը տարաւ դէպի ճակատը։

— Տեսնում եմ անա այդ պատից կախ արած նկարները։

— Տեսնում եմ, պատասխանեց Վասիլի Պետրովիչը, բայց յետոյ...

Արապիկայի կրօնական դասընթացի իրանց
առաջին և վերջին ներկայացումը— «Փակված դը-
րան մօտ», «Նոր ընտանիք», «Մի թաս թէյ» և
«Տօտո» մի արարողություն վաղը լինելու է։ Ներկայաց-
մանը ներկայ էր միայն «Բայրոն» դասակարգը,
որովհետև տեղերի գնները թանկ վիճակով անմատ-
չելի էր միջին և ստորին դասակարգին։ Ճշմար-
տությունը չէր ծածկելու համար պետք է խոստո-
վաներ, որ այցելողները չափերը հրապարակա-
վեն ու փաշայանի երգերը լսելուց, բայց այդ
բառակալությունը զրկվեցան դաշնամուրի վրա
նուազող չը գտնվելու պատճառով։ Աստեղից
նրանք Արապիկայի ուղևորվեցան։

ԵՐԵՎԱՆԻ մեզ հաղորդում են, որ ամսույս
2-ին Երևանի քաղաքապետը ընտրվեցավ պ. Վա-
սիկ Գեղամյանը, որի ընտրությունը ժողովուրդը
անհամբեր սպասում էր։ Վերջապես այժմ կարելի
է յոյս ունենալ, որ քաղաքը կարգ ու կանոնի
տակ կընկնի։ Յուրաքանչյուր ցանկանալով պ. Գե-
ղամյանին, յոյս ունենք, որ պ. Գեղամյանը կը
կրկնապատկի իր ուժերը քաղաքի բարեկամության
համար։

Շնորհակալություն ստացանք թիֆլիսի Բեա-
րական դպրոցի աշակերտների հրատարակած
«(1858—83) Պատկ ժողովածու Բաթումի գրուածը-
նեղի» վերնագրով գրքովը, որ հրատարակողնե-
րը նույնպես են Բաթումի քաղաքի քաղաքապետի
կանական գործունեության յիշատակին։ Գրքովը
բառական գեղեցիկ է, տպված է 1884 թվին Մ.
Վարդանանյանի և ընկ. տպարանում։

«Բաթում» լրագրի խոսքերով էջմիածնից վե-
րադարձած Շամսիյա հայ-լուստարական թեմի
պատգամաւոր Վարդանի ղեկավարութիւնն ունի
մի բոլոր հրատարակել, որի մէջ գեղեցիկ է
լինեն ամենայն հայոց ծայրագոյն պատրիարք
կաթողիկոսի ընտրութեան բոլոր մանրամասնու-
թիւնները։

«National Zeitung» լրագիրը ասում է, որ
բոլոր լուստարական երկրներում ժողովրդի բարո-
ւութիւնը բարձրացնելու ամենայնոց միջոցը հա-
մարվում է առևտրի զարգացումը օտար պետու-

թիւնների հետ և տեղական արդիւնքների արտա-
սանման վաճառահանելը, մի և նոյն ժամանակ,
ի հարկէ, պէտք է աչքի առաջ ունենալ օտար
երկրների պահանջի մեծութիւնը։ Ռուսաստանի
համար, գերմանական օրգանի խօսքերով, մինչև
այժմ հարստութեան և եկամուտի զլխաւոր աղ-
բիւր եղել է հացի վաճառահանութիւնը։ Որ Ռու-
սաստանը այս երկու վերջին տարիների սուսու-
թիւնից սպասված չափը չը ստացուէ, այդ բանը
«National Zeitung» լրագրի կարծիքով, մեղաւոր
է այդ երկրի թէ երկրաբանական և թէ ջրային
ճանապարհների պակաս զարգացումը։ Միակ այդ
հանգամանքը արգելում է Ռուսաստանին օտար
չուկաներում յաղթող հանդիսանալ օտար երկրնե-
րի վրա, որոնք այժմ միջոց են նրա հետ չոր-
հիւ իրանց ճանապարհների չափազանց զարգաց-
մանը։

«Новое Обозрѣніе» լրագրի մէջ կարդում ենք.
«Շարաթ օր, ճաշից յետոյ 4 ժամին թիֆլիսի
գումայի ճաշատունը Սվալա գնացին, այնտե-
ղի աղբիւրների ջուրը քննելու համար։ Որպէս
յայտնի է, քաղաքային վարչութիւնը Սվալայի
աղբիւրների ջուրն է առաջարկում գումային ջուր
մատակարարելու համար քաղաքին։ Այդ ճանա-
պարհորդութիւնը նպատակ ունէր տեղի ու տեղը
ճանապարհները, պ. պ. ճանապարհներին ջրի յատկու-
թիւնների հետ։ Գործառնապէս, աղբիւրները մաս-
րաւան քննութեանը արդեւք դարձաւ յարգաւոր
անձերի, սակայն, չը նայելով դրան, շատերը
ճաշատուններից պտրտեցին և տեսան ջրի բոլոր
անցքերը։ Ջրի համը լաւ է, իսկ Գորգաթի հա-
մալարանի պրօֆէսոր Զմիգալի կատարած անա-
լիզի համեմատ, պէտքական է գործածութեան
համար։ Ինչ որ վերաբերում է ջրի յանակութեա-
նը, հետազոտութիւնների համեմատ (հետազոտու-
թիւնների արեցին լեռնային լիճակներէն) Կօնքա-
ղի և Սօրկին և ինժեներ—արխիւէկտօր Օլե-
րով) փետրվար ամսում օրեկան (օր ու դիւր)
մինչև 400 և եկել 250,000 վեդրօ ջուր,
իսկ ներկայ ժամանակում 500,000 վեդրօյց աւե-
լի ջուր է դուրս գալիս։ Չենք կարող չը յայտնել
մեր ամենամեծ քաղաքային լիճակները շուտով
ջրանցք անցկացնելու իրադրութիւն մասին։ Վա-
րկակալաւը, Գօրգաթի անգամ ջրանցքեր ու-

նեն, Բագուս արդէն վերջացրեց այդ գործը, և
թիֆլիսի ամօթ կը լինէր առանց ջրանցքի մը-
նալ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզում բժշկական ֆակուլտետի
նորեւումս լոյս տեսած հաշուից երևում է, որ
անցեալ տարի մի քանի կանայք բժշկա-
կան ու թե և ոչ ոչ օրի աստիճան ստա-
ցան, և որ նրանցից շատերը իսկույն բժշկների
տեղեր ստացան կառավարական հիւանդանոցնե-
րում։ Բառական հետաքրքիր է այն հանգամանքը,
որ կին-բժիշկների թիւում գտնվում են և երկու
նշգրտակներ։ Բժշկական ֆակուլտետի հաշի-
լոյս տեսնելուն համարեա միաժամանակ տպվե-
ցաւ «Nouvelle Revue» ամսագրում մի յօդուած,
որ նուիրված է կանանց բժշկական ուսման խնն-
դին։ Այդ յօդուածի մէջ խնդրել քննում է մար-
դաբանական տեսակետից։ Այդ յօդուածի հեղինա-
կը յիշեցնում է այն բանի մասին, որ միլիոնաւոր
կանայք կան, մանաւանդ մասնագիտանների
մէջ, որոնք երբեք չեն համաձայնվի տղա-
մարդ բժշկի օգնութեանը դիմել։ Անգլիական կա-
ռավարութիւնը Հնդկաստանում վարուց արդէն
ուշագործիւն դարձրեց այդ հանգամանքի վրա
և 18 միլիոն հնդիկ կանանց բժշկական օգնու-
թիւն հասցնելու հարցով դրաւ լիցիւ, 30 տարի
առաջ արդէն հիւանդապահ կանայք էր պատրաս-
տում Անգլիական Հնդկաստանի ղլխաւոր քաղաք-
ներում՝ Կալկուտայում, Բոմբէյում և Մադրասում։
1874 թվից թիւլ է տրված կանայցը յաճախել
Մադրասի «Բժշկական ուսումնարանը» շնորհիւ ա-
ռողջապահական վարչութեան նախագահ Էդու-
արդ Բարթօլոմի աշակերտներին։ Ներկայումս Կալ-
կուտայի «Medical College» բայց է կանանց
համար, և կին-բժիշկների թիւը տարուց տարի
աճում է, թէպէտ և դեռ չէ բաւականացնում
նրանց մէջ զգալիաւ պահանջին։ Մի արտաշարժ
պատմութիւն է հաղորդում այդ առիթով «Nouvelle
Revue»-ի յօդուածի հեղինակը։ Բժիշկ-կին Բէյլի
կանչված էր բժշկական օգնութիւն հասցնել Մա-
դրասին, կինարօնական Հնդկաստանի ինքնու-
րոյն իշխանի կողմը, որը երկար տարիների ըն-

թացքում տանջվում էր ներքին հիւանդութիւնից։
Տ. Բէյլիին յաջողվեց բժշկել նրան և այդ երկրի
շատ ուրիշ հիւանդ կանանց։ Մնաս բարեւ ժա-
մանակ, Մադրասին դիմեց նրան հետեւել խօս-
քերով։ Գուր արժեք գնում էր Անգլիա, հաղորդե-
ցէր թագուհուն, Ուէլսի իշխանին և իշխանուհուն,
և ձեր երկրի բոլոր ընտելիներին, թէ արքան մեծ
են հնդկական կանանց տանջանքները, թէ ար-
պէս նրանք յաճախ մեռնում են հիւանդութիւնից
առանց որ և է օգնութեան։ Գուր ինձ խոստա-
նում էր այդ բանը։ Տիֆլիսի Բէյլիին աշխատում
էր բացատրել նրան եւրօպական և ասիական պե-
տութիւններում թագաւորների դէպի իրանց հը-
պատակները ունեցած յարաբերութիւնների գանա-
ղանութեան վրա, և սակայն թէ թագուհու հետ
տեսնելը դժուար է։ Միթէ դուք չը պատմեցիք
ինձ ձեր թագուհու բարեարտութեան մասին,
հարցրեց Մադրասին, դուք չէիք, որ ինձ ցոյց
տուիք այն կամուրջի նկարը, որ փոխ էր եկել և
դուք չէիք նկարագրում ինձ ձեր թագուհու վիշտը,
այդ կամուրջի տակ սպանված մարդկանց համար։
Այս մեր գրութիւնը աւելի ևս սարսափելի է։
Պատմեցէք քերականութեամբ մեր գրութեան մասին,
և ես հաւատացած եմ, որ նա կը զմայաւորվի
մեր տանջանքներից։ Խօսքերը մոռացվում են,
չարտաւարում էր նա, գրեցէր իմ ներկայութեամբ
թղթի վրա ինդիկա և յանձնեցէր թագուհուն։
Տիֆլիսի Բէյլիին կատարեց Մադրասի խնդրքը,
և Վիկտորիա թագուհուն մեծ յօժարութեամբ ա-
կանջ գրեց նրան։ Ես կը ցանկայի, սակայն նա
կին-բժիշկին, որ բոլոր իմանային, որ մենք խո-
րին կերպով համակրում ենք նրանց, որոնք նուի-
րում են իրանց աշխատանքը հիւանդ կանանց
տխուր վիճակի թեթեւացնելուն Հնդկաստա-
նում։

Խաղաղութիւն-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Մէլանների վարչութիւնը
յայտնում է յընդհանուր տեղեկութիւն
Թիֆլիս քաղաքի մօբալաքներին, որ հար-

- Գիտես սրանք ինչքն են։
- Ոչ, չը գիտեմ։ Վասիլի Պետրովիչը տեղիցը
վեր կացաւ և մօտեցաւ պատին։ Կապուտ, կար-
միր, գորշ և սև գոյններից նա ոչինչ չը հասկացաւ,
նոյնպէս և խորհրդաւոր թուանշաններից, որոնք
գրուած էին կարմիր կէտաւոր գծերի շուրջը։—
Սրանք ինչ են, յատակագծեր են։
- Այո, յատակագծեր են, բայց ինչ բանի։
- Ճշմարիտը խոստովանած, չը գիտեմ։
- Այդ յատակագծերը, սիրելի Վասիլի Պետ-
րովիչ, ներկայացնում են մի ապագայ ամբարտա-
կայց գիտես ինչ բան է ամբարտալը։
- Ի հարկէ, չէ որ ես լեզուի վարժապետ եմ։
Ամբարտալը... ինչպէս ասած... մի տեսակ թումբ է։
- Այո, այո, մի տեսակ թումբ է, որ ծառայում
է արհեստական նաւահանգիստ շինելու համար։
Այդ յատակագծերը ներկայացնում են ներկայումս
շինվող ամբարտալը... Գուր բարձրից ծովին նայել
ես։
- Ինչպէս չէ։ Արանշելի տեսարան է։ Բայց չի-
նութիւն ես չեմ նկատել։
- Եւ դժուար թէ կարելի լինի նկատել, պա-
տասխանեց Կուրեռնաչիլը ծիծաղելով։— Այդ ամ-
բարտալը, Վասիլի Պետրովիչ, համարեա ամբող-
ջապէս ոչ թէ ծովումը, այլ արտեղց ցամաքում է։
- Ինչպէս թէ այդտեղ։
- Այո, աստեղ, իմ և այլ ճարտարապետների
- Կնօրոյնի։ Պոչկիլովսկու և ուրիշների մօտ։
Խօսքը ի հարկէ մեր մէջ մնայ, ես քեզ իբրեւ ըն-
կերի եմ ասում։ Ինչ ես աչքերդ այդպէս չուում
իմ վրա։ Այդ շատ հասարակ բան է։
- Լսիր, բայց այդ վերջապէս սարսափելի է։
Միթէ ճշմարիտ է ասածդ, միթէ այդ բոլոր չքե-
ղութիւնը անաղին միջոցներով է ձեռք բերված,
միթէ բոլոր անցեալը նրա համար էր որ հասցնէ
քեզ մինչև... մինչև... Եւ դու դեռ այդպէս ան-
խառն ես նայում այդ ամենին...
- Սպասիր, սպասիր, Վասիլի Պետրովիչ, խն-
դրեմ մի կողմ թող այդ խիստ խօսքերը։ Գուր աս-
տում ես ճանաչուի միջոցներով, բայց նախ ասա
ինքդին, ինչ է նշանակում աղին և ինչ է նշա-
նակում անաղին։ Ես ինքս այդ չեմ հասկանում.

- գուցէ մոռացել եմ, բայց կարծում եմ որ երբեք
էլ չեմ իմացել։ Ճշմարիտը ասած, ինձ թիւում է
որ իսկի դու էլ չես հասկանում, այլ միայն աս-
տում ես։ Եւ առհասարակ աւելի լաւ է այդ թողնես,
նախ որ այդ անբարեբաղիւրի է։ Թարգմար կար-
ծիքների աղտոտութիւնը։ Գուր ասում ես անաղին
է, ասած ինչպէս կամենում ես, միայն թէ մի հայ-
հոյր, միթէ ես քեզ հայհոյում եմ որ դու ինձ հետ
մի կարծիքի չես։ Բոլոր բանը, սիրելիս, կախված
է հայեացքից, տեսակետից, բայց որովհետեւ այդ
տեսակետները բազմաթիւ են, այս պատճառով
աւելի լաւ է թքնել այդ խնդրի վրա և անցնել
սեղանատուն մի քիչ օղի կոնձելու և ուրիշ աւե-
լի քաղցր առարկաների վրա խօսելու։
- Այո, Նիկոլայ, Նիկոլայ, սիրտս ցաւում է քո
տեղալ։
- Այդ կարելի է, սրտումդ կարող ես ցաւել,
ինչքան ցանկանում ես, այսօր կը ցաւեմ, վաղը անց
կը կենան։ Կը նայես կը տեսնես և ինքք քեզ կա-
սես չէ՞նչ կոնձ եմ եղած եղել։ Զիշտ այդպէս
կասես, այդ խօսքերը լաւ պահիր մտքիդ։ Գնանք
մի մի բաժակ կոնձելու ու մոռանանք մտքերեւ
ճարտարապետներին, իսկեւն էլ հէնց նրա համար
է, սիրելիս, որ մարդ մտքով... Հիմա դու ասա,
սիրելի ուսուցիչս, դու ինչքան պէտք է ստանաս
հը։
- Այդ մի և նոյն է քեզ համար։
- Է՛լի մօտաւորապէս։
- Մասնաւոր դասերի հետ միասին մօտաւորա-
պէս երեք հազար բուրլի։
- Ահա տեսնում ես, արժէ միթէ երեք հազար
բուրլո համար ամբողջ կեանքը դասերով մաշել։
- Իսկ ես ինձ համար հանդիստ նստում եմ և
մտիկ եմ անում, կամենում եմ աշխատում եմ,
կամենում եմ, ոչ, եթէ զլխիս փչէ, ես կարող եմ
ամբողջ օրն էլ մէջքիս վրա պառկել և թքել դէ-
պի առաւանդաւր։ Իսկ փող... փողը այնքան շատ
է որ նա լաւ համար դատարկ բան է դարձել։
- Երբ նրանք մտան սեղանատուն, ամեն բան
արդէն պատրաստ էր ընթերցել համար։— Սեղանը
զարդարված էր վարդագոյն եղան մօի խաշուով,
անգլիական արձանագրութիւններով և գեղեցիկ

- պատկերներով նախշված արկղիկներով, որոնց մէ-
ջից դուրս էին նայում զանազան քաղցրանիւններ
և ուսուցիչներ և վերջապէս մի կարգ չիշերով։
Բարեկամները մի մի փոքրիկ բաժակ օղի խմելով
նստեցին ընթերցել։— Կուրեռնաչիլը ուսում էր
հանդարտ և ընդհատումներով, նա բոլորովին խո-
րատուցւած էր իր դրաղման մէջ։
- Վասիլի Պետրովիչը ուսում էր ու մտածում, մը-
տածում էր և ուսում։ Նա սաստիկ յուզված էր և չը
զիտէր թէ ինչպէս պահէ իրեն։ Իր համոզմունքների
համաձայն, նա պէտք է իսկույն թողնէր իր նախ-
կին ընկերոջ տունը և մէկ էլ ամենին ոտը չը
կոխէր այնտեղ։ «Այդ պատառը դողացած է,—
մտածում էր նա իւրաքանչիւր կտորը բերանը
տանելիս և իւրաքանչիւր անգամ հիւստիէր տան-
տիրոջ աճած գինին խմելու։— Իսկ իմ արածս
միթէ անաղինութիւն չէ։ Այդ տեսակ շատ որո-
շումներ էին յուզվում խեղճ վարժապետի գլխի
մէջ, բայց այդ որոշումները որոշումներ էլ մնում
էին, իսկ նրանց տեսից կարծես մի գաղտնի ձայն
ամեն անգամ փոփոտւ էր— Է՛հ, ինչ անենք։
Եւ վատիլի Պետրովիչը ինքն էլ զգում էր որ
անկարող է այդ հարցը վճել, ու մնում էր նըս-
տած։ Արդարանալու համար մէկ մէկ նրա գլու-
մը ծաղում էր Է՛հ, ինչ կայ որ, թող դիտեմ,
բայց նա ինքն էլ ամաչում էր այդ մտքից։ Է՛հ, չէ
հարկաւոր է ինձ դիտել, ես գրեց եմ ինչ է։
- Այդպիսի միս, դու լաւ ուշագործութիւն դարձ-
րու, ամբողջ քաղաքում չես կարող գտնել, ըսի-
սեց Կուրեռնաչիլը և պատմեց մի անաղին պատ-
մութիւն թէ ինչպէս Կնօրոյնի մօտ ճաշելիս
հիացել է նրա խաշուի լաւութիւնով, ինչպէս ի-
մացել է թէ նա որտեղից է այդ միսը ձեռք բե-
րում և թէ վերջապէս ինքը ինչպէս է ձեռք բե-
րել։
- Գուր լաւ ժամանակին վրա հասար, վրա բե-
րեց նա մի պատմութիւնը վերջացնելով։— Կեանս-
քումդ այդպիսի բան ամենին կերած կան։
- Յիւրաք, խաշուն շատ լաւն է, պատասխա-
նեց Վասիլի Պետրովիչը։
- Սընդիշի է, սիրելիս, պահելիս։ Ես սիրում
եմ որ ամեն բան լաւ լինի։ Բայց ինչու ես խը-

- մում։ Սպասիր ես այս բազմին քեզ համար կա-
ծեմ։
- Այս ասելով նա սկսեց մի նոյնպիսի ձիգ պատ-
մութիւն գինու մասին, որի մէջ խաշուն էին և
անգլիական նաւը, և Լօնդօնի վաճառականական
ընկերութիւնը և նոյն Կնօրոյնի և մաքսատունը։
Գինու պատմութիւնը անելով Կուրեռնաչիլը խը-
մում էր և աւելի ու աւելի տաքանում։— Նրա
յոգնած աչքերի վրա երեսցին կարմիր ըը-
ծեր, նրա խօսակցութիւնը սկսեց կամայ կամայ
արագանալ և կենդանանալ։
- Ինչ ես այդպէս լուռ նստել, հարցրեց նա
վերջապէս Վասիլի Պետրովիչին, որը յիշաւ ա-
ռանց մի խօսք արտասանելու լուռ լուռ էր սե-
ղանը զարդարող մի, գինու, պանրի և ուրիշ
բարիքների գիւղացիներով։
- Ոչինչ, հէնց այնպէս, խօսելու չէ գալիս։
- Խօսելու չէ գալիս... Ինչ յիմարութիւն։ Չէ,
ես տեսնում եմ որ դու իմ խօսակցութեան
վրա ես այդպէս ջլիկ կախ անում։— Այնտեւ,
շատ ափսոս որ բոլորը այդպէս յայտնի պատմե-
ցի։ Եթէ այդ անիծած ամբարտալը չը լինէր,
ընթերցը շատ աւելի ուրախ անց կը կենար...
բայց աւելի լաւ է, Վասիլի Պետրովիչ, մի մոռա-
ծիր այդ մասին, բոլորի վրա թքիր ու գլխիդ
դուրս հանիր։ Ինչ պէտք է արած, սիրելիս, ես
չը կարողացայ ձեր յոյսերը արդարացնել։ Կեանքը
ուսումնարան չէ։ Վերջապէս ես չը գիտեմ ար-
դեօք դու երկար պիտի մնաս քո ընտրած շաւի-
ղի մէջ թէ չէ։
- Խնդրեմ իմ մասին ենթադրութիւններ չանես,
ասաց Վասիլի Պետրովիչը։
- Նեղանում ես... բայց ես ճշմարիտ եմ աս-
տում որ երկար չես մնայ։ Ասա խնդրեմ, մինչև
հիմա ինչ օգուտ ես տեսել քո անհասարկութիւնից
և միթէ այժմ քո խիղճը բոլորովին հանդիստ է։
Միթէ ամեն օր չես մտածում թէ քո ընկալացը
համաձայն է արդեօք զաղափարներիդ հետ և մի-
թէ ամենայն օր ինքը չես համոզվում որ ամե-
նին համաձայն չէ։— Կարծեմ ասածս ճշմարիտ է,
չէ։— Բայց իմիր, լաւ գիտի։

(Կը շարունակվի)

